

Գաղութահայ Կեսեր

ԱՊՐԻԼ 24-Ը ՊԱԹՈՆ ԲՈՒԺԻ ՄԷՋ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Լուիզիանա նահանգի մայրաքաղաք Պաթոն Բուժի մէջ Ապրիլ 25-ը եղաւ բացառիկ օր մը, պատմական կողուելու աստիճան, որուն ընթացքին քաղա-



քի փոքրաթիւ գաղութը հանգամանօրէն նշեց Յեղասպանութեան 94-րդ ամեակը, գաղութի գրեթէ բոլոր անդամներուն մասնակցութեամբ:

Ուղղակի հրաշալի էր տեսնել բոլորին մասնակցութիւնը՝ պատանի, երիտասարդ, տարեք, որոնք ամենայն յարգանքով եւ երկիւղածութեամբ մաս կազմեցին Ապրիլեան այն բոլոր նախաձեռնութեանց, որոնք ծրագրուած էին քաղաքի Նորահաստատ Ս. Կարապետ Յայց. Առաքելական եկեղեցւոյ ծխական հորինուորին եւ տեղւոյն ՍՂԳԿ Ժիրայր-Մուրատ մասնաճիւղին կողմէ:



Արդարեւ, սոյն հանդիսութեանց Լուս Անճելլաէն յատուկ հրաւերով Պաթոն Բուժի ժամանած էր «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութեան անդամ ընկ. տղոք. Յարութիւն Սաղրեան, ինչպէս նաեւ այլ վայրերէ ժամանած հայրենակիցներ, որոնք մաս կազմեցին յայտագրին: Նաեւ յատուկ առաքելութեամբ ժամանած էր երիտասարդ եկեղեցական՝ Յոգէ. Տ. Չաւէն վոր. Եազիճեան՝ մասնակցելու եկեղեցական արարողութեանց:

Յեղասպանութեան 94-ամեակի նշումը ունեցաւ բազմաթիւ եւ բազմատեսակ բովանդակութիւն: Ապրիլ 25-ի Շաբաթ երեկոյեան ժամը 6:00-էն սկսեալ, կատարուեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն Ս. Կարապետ եկեղեցւոյ կից գերեզմանատան մէջ, Հայաստանէն բերուած յատուկ խաչքարին շուրջ, որուն ընթացքին հայր սուրբը ունեցաւ հոգեշունչ ելոյթ մը, հա-

յերէն եւ անգլերէն լեզուներով, վեր առնելով Յեղասպանութեան նշանակութիւնը հայ ժողովուրդի կեանքէն ներս, շեշտելով վառ պահելու յիշատակը մեր միլիոնաւոր նահատակներուն եւ ամբողջ կառոյցի մեր ժողովուրդի բարոյական արժեքներուն եւ ազգային պատկանելիութեան, յատկապէս նոր սերունդին մօտ:

Հոգեհանգստեան յուզիչ արարողութեան ետք ներկայները ուղղուեցան եկեղեցւոյ կից սրահը, ուր բացման խօսքով ելոյթ ունեցաւ շրջանի ազգային-հասարակական ղեկավար ընկ. Վազգէն Գալթաթեան, նախ՝ օրուան խորհուրդը եւ ապա հիւր բանախօսը ներկայացնելու համար: Ընկ. տղոք. Յարութիւն Սաղրեանի ելոյթէն առաջ, հայր Չաւէն օրհնեց բոլոր ներկայները եւ «Զգործս ձեռաց մերոց»-ով հրաւիրեց յարգելի բանախօսը՝ իր խօսքը փոխանցելու:

Շուրջ 45 վայրկեաններու ընթացքին ընկ. Սաղրեան հայերէն եւ անգլերէն լեզուներով անդրադարձաւ Յեղասպանութեան հետ կապուած պատմաքաղաքական եւ մարդկային դէպքերուն, շեշտը դնելով թուրքերու կողմէ Յեղասպանութեան ճանաչումէն անդին անոր հետ կապուած հայ ժողովուրդի պահանջներուն վրայ՝ վերադարձ բռնագրաւուած հողերու, նիւթական հատուցում, Թուրքիոյ մէջ հայ եւ այլ փոքրամասնութեանց իրաւունքներ, եւ այլն: Բանախօսութեան արարտիւն տեղի ունեցաւ հարց-պատասխանի աշխույժ եւ հետաքրքրական պահ, որուն ընթացքին, մանաւանդ երիտասարդներու կողմէ, եղան հարցումներ Թուրքիոյ վարած ուրացման քաղաքականութեան, միջազգային շրջանակներու վերաբերմունքին, մեր՝ հայերու կատարելիք գործին մասին: Հարցումներուն տրուեցան համապարփակ եւ գոհացուցիչ պատասխաններ:

Յայտագրի արարտիւն ամփոփելով եւ երգով ելոյթ ունեցան Սոսի Գալթաթեան եւ Ազատուի Մուրաֆեան: Հուսկ, հայր Չաւէն անգամ մը եւս անդրադարձաւ Յեղասպանութեան իմաստին, ապա «Պահպանիչ»-ով փակեց երեկոյն:

Չեռնարկներու 3-րդ բաժնով տեղի ունեցաւ հոգեճաշ՝ գոհածներուն ի յիշատակ: Բոլորին վկայութեամբ, եզակի ձեռնարկ մըն էր Պաթոն Բուժի մէջ Եղեռնի 94-ամեակին նշումը, որուն համար իսկապէս շնորհաւորելի են շրջանի պատասխանատու մարմինները եւ Ս.Ղ.Յ.Կ. Ժիրայր-Մուրատ մասնաճիւղի ընկեր-ընկերուիները, ղեկավարութեամբ ընկ. Վազգէն Գալթաթեանի:

ԶԱՆԳՈՒՎԾԱՅԻՆ ՀՍԿԱՅ ՅՈՅՅ ՀՈՒՎՈՒՄՈՒՄ ԵՒ ԿՐԹԱՅԻՆ ԿՐԹՈՒՄ

Ուրբաթ, Ապրիլի 24-ին, աւելի քան 40,000 հայեր, մեծ կարգապահութեամբ բողոքի ցոյց մը կատարեցին Յոլիվուտի «Փոքրիկ Հայաստան» տարածաշրջանին մէջ: Արդարեւ, Միացեալ Յայ Երիտասարդներու կազմակերպած պահանջատիրական այս մեծածաւալ ցոյցի մասնակիցները տասնեակ մը պատահաւոր կողմէ զատապարտեցին 94 տարիներ առաջ կատարուած 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը:



Մօտ 2 ժամուան քայլարշաւ-ցոյցի արարտիւն, ելոյթներ ունեցան հայ եւ ամերիկացի անձնաւորութիւններ, որոնք ոգեկոչեցին մեր նահատակներու յիշատակը, պահանջելով ցեղասպանութեան ճանաչումը ամերիկեան Գոնկրեսին կողմէ:

Հանդիսութիւնը սկսաւ Հոգէ. Տ. Տաճատ Մ. վոր. Եարտըմեանի օրհնութեամբ եւ ելոյթով: Բացման խօսքով հանդէս եկաւ ընկ. Ստեփան Յովակիմեան, ապա Միացեալ Յայ Երիտասարդներու կազմակերպութեան անունով ելոյթ ունեցան ներկայի նախագահ Արութիւն Յարութիւնեան, նախկին նախագահ Յովակի Չիրակեան եւ պատասխանատուներէն՝ Չարուի Նաճարեան: Որպէս հիւր խօսակցներ ելոյթներ ունեցան Նոր Սերունդ Մշակութային Միութեան ատենապետ Յարութի Տեր Դաւիթեան, United Armenian Fund-ի նախագահ Յարութի Սասունեան, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր իւզիկ Արթ. Տ. Վիգէն Ա. քիւն. Վասիլեան, Լուս Անճելլա քաղաքի հորինուորի նախագահ Էրիք Կարսեթի, ինչպէս նաեւ Յեղասպանութեան կանխարգիլման Stand կազմակերպութեան ներկայացուցիչ Սարա Ուալիք:

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՆԻՒ ԵՈՐՔԻ «ԹԱՅՄՋ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

Կիրակի, Ապրիլ 26-ին հազարաւորներ հաւաքուեցան Նիւ Եորքի «Թայմզ» հրապարակին վրայ, ոգեկոչելու համար Հայոց Յեղասպանութեան 94-րդ տարելիցը: Ինչպէս նախորդ տարիներուն հանդիսութիւնը կազմակերպուած էր Վարդանանց Ասպետներու եւ Ասպետուհիներու կողմէ, իսկ կը հովանաւորուէր ՀԲԸՄ-ի, Հայկական Համագումարի, Հայ Դատի Յանձնախումբի, ՈԱԿ-ի եւ Ս.Ղ. Հնչակեան Կուսակցութեան կողմէ:



Յաջորդական 24-րդ տարին ըլլալով միջոցառումին մասնակցեցան ու ելոյթներ ունեցան քաղաքական յայտնի դէմքեր, մտաւորականներ, հայկական դատի ջատագովներ եւ հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Այս տարի ելոյթ ունեցողներու շարքին էին ԱՄՆ Ծերակոյտի ազդեցիկ անդամներէն Չարլզ Շումըրը (Դեմոկրատ-Նիւ Եորք), գոնկրեսական Ֆրանց Փալոն (Դեմոկրատ-Նիւ Ճորճի), գոնկրեսական Ուայնըրը (Դեմոկրատ-Նիւ Եորք) եւ ուրիշներ:

Ելոյթ ունեցան նաեւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչները:

Ս.Ղ.Յ.Կ. Հայ Ամերիկեան հորինուորի (ՀԱՆ) Հիւսիս Արեւելեան նահանգներու շրջանի ատենապետ Տիգրան Նալպաստեան իր ելոյթին մէջ ներկայացուց ՀԱՆ-ի տեսակետները նախագահ Օպամայի յայտարարութեան՝ Հայաստանի եւ Թուրքիոյ կառավարութիւններուն միջեւ տեղի ունեցող բանակցութիւններուն եւ Թուրքիոյ կողմէ Հայկական Յեղասպանութեան ճանաչման դէմ տարուող աշխատանքներուն մասին:

ԹՐԹԱԿԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԵԿԱ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒ ԴԱՐՁԵԱԼ «ՊԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ»-Ն ԿԸ ԿԱՊԵ

Թուրքիոյ նախագահ Ապտուլլա Կիլի ղեկավարութեան ներքեւ, Թուրքիոյ Ազգային ապահովութեան խորհուրդի հերթական նիստը տեւած է աւելի քան հինգ ժամ եւ այդ ընթացքին, բազմաթիւ այլ հարցերու կարգին, սեղանի վրայ դրուած է նաեւ Թուրքիոյ ու Հայաստանի միջեւ ընդունուած «ճամբու քարտէս»-ը: Խորհուրդը դարձեալ պաշտպանած է այն կարծիքը, թէ «1915-ի պատահարները» կրնան ըննուիլ միայն պատմաբաններու յանձնախումբի մը կողմէ եւ դէպքերը կրնան արժեւորուիլ միայն «անվիճելի ճշմարտութիւններ հաստատող փաստաթուղթերուն վրայ եւ ամէն տեսակ նախապաշարումէ հեռու»:

Արդէն կը նախատեսուի, որ Թուրքիոյ ու Հայաստանի միջեւ առկա հարցերը ըննուիլ ընդհանուր յանձնախումբի մը կողմէ ու պատմաբաններու խումբն ալ կրնայ այդ ընդհանուր յանձնախումբին ենթակառոյցներէն մէկը ըլլալ:

Օրակարգի վրայ էր նաեւ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի կողմէ Ապրիլ 24-ին կատարուած յայտարարութիւնը, նշելով, որ ան «Մեծ Եղեռն» բառերը գործածելով անհանգստութիւն պատճառած էր Անգարայի իշխանութեանը:

Ազգային ապահովութեան խորհուրդը նաեւ ընկած է ԱՖ-դանիստանի մէջ Թուրքիոյ զինուորական ու առեւտրական ներկայութիւնը ընդարձակելու կարելիութիւնները ու «ախաբեկչութեան դէմ պայքարը» շարունակելու կարելիութիւնը:

Թուրքիոյ նախագահ Կիլի անգամ մը եւս շեշտեց, թէ Ատրոպէյճանի հետ յարաբերութիւնները շատ աւելի ամուր եւ խորունկ են, քան որեւէ այլ երկրի մը հետ, եւ վստահեցուց, թէ Կովկասի մէջ Թուրքիոյ որդեգրած քաղաքականութիւնը նպաստաւոր պիտի ըլլայ բոլորին:

Իր կարգին, Ատրոպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ Պրիւքսելի մէջ ըսաւ, որ Ատրոպէյճան պիտի գործածէ շրջանին մէջ յայտնուած նոր իրականութեան յարմարելու իր իրաւունքը: «Մենք մեր դիրքը քանկիցս հրապարակած ենք: Մենք ուրիշ եր-

կիրներու ներքին հարցերուն չենք միջամտեր: Ուրեմն այս խըն-դիրին մէջ որոշումի մը յանգիլը ամբողջովին կախեալ է Թուրքիոյ ու Հայաստանի իշխանութիւններէն: Ասիկա անոնց իրատունքն ու ընտրութիւնն է», յայտնեց Ալիեւ՝ յիշեցնելով, որ տակաւին կը շարունակուի հայերու այն «բռնագրաւումը», որուն հետեւանքով փակուած էր Թուրքիա-Հայաստան սահմանադուրը: «Մենք ալ մեր քայլերը պիտի յարմարեցնենք ստեղծուած նոր կացութեան», հաստատեց Ալիեւ՝ առանց աւելի յստակացնելու, թէ ինչ ըսել կ'ուզէր այս նախադասութիւնը գործածելով:

Ալիեւի այս արտայայտութիւնը մեկնաբանուեցաւ իբրեւ գանգատ այն մասին, թէ Թուրքիա անոր չէ հաղորդած անհրաժեշտ տեղեկութիւնները Հայաստանի հետ բանակցութեանց մասին:

Ալիեւ նաեւ յստակ կերպով գանգատեցաւ Թուրքիոյ ծախուող բնական կազմի սակագիններէ: Ան ըսաւ, որ Թուրքիա բնական կազմի 1000 մեթր խորանարդին համար Ատրոպէյճանին կը վճարէ 120 տոննա, մինչդէռ Նոյն ծաւալին համար 400 տոննա կը վճարէ Ռուսիոյ, ուրեմն պայման է, որ Ատրոպէյճան բարձրացնէ Թուրքիա ուղարկուած բնական կազմի գինը:

Վերջապէս, թրջական մամուլը կը հաղորդէ, թէ Ատրոպէյճանի ուժանիւթի ու ճարտարարուեստի նախարար Նաթիք Ալիեւ չէ մասնակցած Թուրքիոյ մէջ կայացող Պատերազմական ակադեմիոյ Ռազմավարական հետազոտութիւններու կեդրոնին կողմէ կազմակերպուած այն աշխատաժողովին, ուր ան նաեւ պիտի բանախօսէր: Թուրքիոյ ուժանիւթի նախարար Հիւսի Կիլի-լէր նախ յայտնած է, թէ Ատրոպէյճանի իր պաշտօնակիցը չէր կրցած գալ բազմակարգ ըլլալուն պատճառով, սակայն աւելի ուշ ան փոխած է խօսքը՝ ըսելով, որ Ատրոպէյճանի ուժանիւթի նախարարը անհանգիստ է:

Ս. ՄԹՈՆ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԸ ԿԸ ԲԻՏԻ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՊՐԱԾ ԺՈՂՈՎՈՐԴԻ ՅԱՒԵՆ»

Ներկայիս Հայաստան կը գտնուի Ամերիկացի յայտնի դերասան, երաժիշտ, բանաստեղծ Մայքըլ Սթոն՝ Հայոց Յեղասպանութեան 94-րդ տարելիցին նուիրուած երգչուհի Ֆլորա Մարտիրոսեանի համերգին մասնակցելու նպատակով: Ան Ապրիլ

29-ին հանդիպում ունեցած է Երեւանի պետական համալսարանի ուսանողներուն հետ, որոնց յայտնած է. «Երբ առաջին անգամ լսեցի Ֆլորա Մարտիրոսեանի երգը, անոր մէջ ցաւ զգացի, հակառակ անոր, որ ոչինչ կը հասկնայի: Ես ըմբռնեցի, որ հայկական երգը հայերու ցաւէն կը բխի, Յեղասպանութիւնն ապրած ժողովուրդի ցաւէն: Եւ այդպէս սկսաւ Հայոց Յեղասպանութեան ճանաչման համար պայքարի իմ ուղին»:

Նշեց, որ Սթոն 18 տարեկան հասակին մասնակցած է Վիեթնամի պատերազմին, այնտեղ կորսնցուցած է բազմաթիւ ընկերներ եւ ապրած է պատերազմի դաժանութիւններն ու վարձագութիւնները: «Ես ամէն ինչ պիտի ընեմ, որպէսզի Հայոց Յեղասպանութիւնը յայտնի դառնայ ամբողջ աշխարհին: Ես այստեղ եմ ձեզի համար, ձեզի հարաւոր աշակցութիւն ցոյց տալու համար», յայտարարած է Մայքըլ Սթոնը:

Ս. Սթոն նկարահանած է Ժիրայր Դարասեանի՝ Հայոց Յեղասպանութեան նուիրուած «Կա՛նգ առեք, մարդիկ» 8.5 վայրկեանանոց ֆիլմը, որուն առաջին ցուցադրութիւնը տեղի պիտի ունենայ համերգին ընթացքին: Ան նաեւ նշեց, թէ իր ցոյցը՝ դերասանուհի Շերըն Սթոն հաւանաբար այցելութիւն մը կատարէ Հայաստան, յառաջիկայ Յունիսին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՒԼԵԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՅԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՌՈՒՅԵՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ

Հայաստանի հիւլեական նոր կայանը կառուցելու համար շինարարական աճուրդին ներկայացած էին միայն երկու ընկերութիւններ, երկուքն ալ ամերիկեան, յայտնած է Հայաստանի պետական գնումներու գործակալութեան մամուլի պատասխանատու Վասակ Թարփոշեան:

Այսպիսով չկայ այն մտավախութիւնը, որ թրջական շինարարական ընկերութիւն մը կրնայ ստանձնել ռազմավարական արժեք ներկայացնող գործարանի կառուցումը:

Թարփոշեան տակաւին կանխիկ կը նկատէ երկու ամերիկեան ընկերութիւններու անուններու հրապարակումը: Աճուրդին յարթողին անունը պիտի հրապարակուի Մայիս 5-ին: Նշեց, որ նոր հիւլեականի կառուցումը պիտի իրականացուի Եւրո-փութեան օժանդակութեամբ: